

## ԱԶԳԱՅԻՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՊԱՇՏՊԱՆԸ. ՊԵՏՐՈՍ ԱԼԱՀԱՅՏՈՅԱՆ

### ԱՆԻ ՀԱԿՈՐՅԱՆ\*

Հոդվածում ներկայացված են հայ ազգային երաժշտության մեծ նվիրյալ, բանահավաք-երաժշտագետ, խմբավար, հասարակական գործիչ Պետրոս Ալահայտոյանի կյանքն ու գործունեությունը: Նա եղել է Բարսեղ Կանաչյանի սանը և մասնագիտանալով իբրև երաժշտագետ՝ աշխատել է Բոյունելի պետական ռադիոյում: Ալահայտոյանը Յեղասպանության 70-րդ և Կոմիտասի մահվան 50-րդ տարելիցների կապակցությամբ լծվում է ազգանպաստ մնայուն աշխատանքի: 1985 թվականից, թողնելով մշտական աշխատանքն ու բնակության վայրը, այցելում է Եվրոպայի, Արևելքի և ԱՄՆ-ի հայկական համայնքներ, ծերանոցներ՝ ձայնագրելով անչափ կարևոր ազգագրական և փաստագրական նյութեր: Հսկայածավալ նյութը՝ 430 տուփ մագնիսոֆոնային ձայնագրություն և 125 տուփ մագնիսոֆոնային ժապավեն, նվիրաբերում է մեզ, որն այսօր ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի Արամ Քոչարյանի անվան ձայնադարան-արխիվում է: Թվայնացման և անձնագրավորման փուլերից հետո մեծ երախտագիտությամբ պարտավորված ենք կազմել և հրատարակել ժողովածուներ:

**Բանայի բառեր՝** Պետրոս Ալահայտոյան, երաժշտություն, ավանդական, բանահավաք, ձայնագրություն, բանասաց, ժողովածու:

### Ներածություն

Երաժշտագետ, բանահավաք, խմբավար ու հասարակական գործիչ Պետրոս Ալահայտոյանը հայ ժողովրդի համար բեկումնային ժամանակահատվածում որոշում կայացրեց անել մի բան, որը մինչ այդ նման ծավալով իրականացնել հաջողվել էր միայն հայ ազգային մշակույթին մեծագույն ծառայություն մատուցած Միհրան Թումաճանին: Ի դեպ, այս երկու գործիչները մի քանի կարևոր առումներով զուգադրելի են, ըստ այդմ էլ մեր ժամանակակից Պետրոս Ալահայտոյանը մեծ հպարտության զգացումով է համակվում:

Նախ ընդգծենք վերն ակնարկված այն հանգամանքը, որ XX դարի հատկապես 2-րդ կեսին բուռն զարգացում ապրած երաժշտական բանահավաքչական աշխատանքները հիմնականում անցկացվում էին Խորհրդային Հայաստանի տարածքում, իսկ Մ. Թումաճանն ու Պ. Ալահայտոյանն իրենց «հունձքը» կատարեցին դրա սահմաններից դուրս՝ բավական լայն աշխարհագրական ընդգրկմամբ:

Մյուս և ամենաէական զուգահեռն այն է, որ երկուսի համար էլ ուղենիշ են եղել Կոմիտասն ու իր գործունեությունը: Այսպես, Մ. Թումաճանի պարագայում՝ իբրև անմիջական ուսուցիչ, մյուսի դեպքում՝ հոգևոր հայր, դեռ պատանի Պետրոսին երաժշտության աշխարհի առաջնորդող Բարսեղ Կանաչյանի ուսուցիչ: Անհատական գրույցներից մեկի ժամանակ Պ. Ալահայտոյանն

---

\* ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի ժողովրդական երաժշտության բաժնի գիտաշխատող, [anifolkmusicologist@gmail.com](mailto:anifolkmusicologist@gmail.com), հոդվածը ներկայացնելու օրը՝ 08.10.2021, գրախոսելու օրը՝ 15.10.2021, տպագրության ընդունելու օրը՝ 29.11.2021:

ասաց. «Մենք մեր չնչին գործունեությամբ փշրանքներ ենք Կոմիտասի կերպարի ու արած գործի առաջ, ում անունն իսկ հնչեցնելն արդեն մեծ պատիվ է ցանկացածիս համար»: Եվ այս համեստ խոսքերն արտաբերում է մի մարդ, որը, հոգսաշատ այս դարաշրջանում, թողնելով մշտական աշխատանքը, սեփական սուղ միջոցներով ու բուլրովին միայնակ շրջել է Արևելքի, Եվրոպայի և Հյուսիսային Ամերիկայի երկրների, քաղաքների հայաշատ համայնքներով ու ծերանոցներով, ծայնագրել ու, փաստորեն, փրկել ցեղասպանություն ապրած վերջին սերնդի հիշողության ծայքերում ամբարված ազգագրական արժեք ներկայացնող պատմություններ, վկայություններ, ավանդություններ, ծեսեր, երգեր... Նորից ընդգծենք, որ հենց այս առումով Պ. Ալահայտոյանի բանահավաքչական գործունեությունն իր արժեքով բացառիկ է, քանի որ հանրապետության սահմանների ներսում փայլուն կրթություն ստացած երաժշտագետների մի աստղաբույլ կար, որը, սակայն, չունեի աշխարհասփյուռ հայության հետ շփվելու, նրանց հիշողության մեջ «էրգրից» պահպանված ավանդաբար փոխանցված գիտելիքն ու հենց ցեղասպանությանն առնչվող վկայությունները նման ծավալներով ծայնագրելու հնարավորություն:

### **Հիմնական նյութի շարադրանք**

Պետրոս Ալահայտոյանը ծնվել է 1934 թ. նոյեմբերի 29-ին Բեյրութում՝ ցեղասպանությունից փրկվածների ընտանիքում. հայրը ուրֆացի էր, մայրը՝ կեսարացի: Նախակրթարանին զուգահեռ՝ սովորել է Բեյրութի երաժշտանոցի տեսության և ջութակի դասարաններում: 1948-ից սկսած՝ սովորել է Նշան Փալանճեան ճեմարանում, իսկ 1954-ից՝ Ամերիկյան համալսարանում: Ահա այս ժամանակահատվածում ծանոթանում և մաս է կազմում Կոմիտասի աշակերտ Բ. Կանաչյանի «Գուսան» երգչախմբին և, ինչպես ինքն է նշում, դառնում է հետզհետե կուրացող ուսուցչի «աչքերը»՝ խմբերգերի ձեռագրերը սրբագրելու և դասդասելու գործում: Այս ամենի տրամաբանական և փայլուն հանգուցալուծումն է Բ. Կանաչյանի ստեղծագործական ողջ ժառանգության ամփոփումը հանդիսացող խմբերգերի և մեներգերի երկհատորյակը՝ Պետրոս Ալահայտոյանի և նրա զարմուհու՝ դոկտոր Ծովինար Մարգարեանի աշխատասիրությամբ, Բեյրութ, 2019:

Ծնողների հորդորով 1956 թվականին մեկնում է Բելգիա՝ Լուվեն, դեղագիտություն սովորելու, քանի որ Բեյրութում դեղատուն ունեցող ընտանիքի միակ արու զավակն էր, որ պիտի շարունակեր այդ բիզնեսի ղեկավարումը: Սակայն, իր պնդմամբ, ինքն արդեն իսկ կապված էր երաժշտության ու մասնավորաբար հայ ավանդական երաժշտության հետ անտեսանելի կապերով՝ որքան ճանաչում էր կոմիտասյան հայ երգի գրառումները, այնքան անհնար էր դառնում լինել դրանից հեռու ու անմասն, հաջող գործարար... Հորը չվշտացնելու մեծ ջանքը տևեց միայն 4 տարի, երբ 1961-ին դիպլոմավորված դեղագործը վերադարձավ Բեյրութ և մեծ ծանրությամբ ստանձնեց դեղատան ղեկավարումը՝ զուգահեռ շարունակելով Կանաչյանի հետ իր շփումներն ու արդեն իսկ փորձելով գտնել ու գրառել ժողովրդական երգեր: Ի վերջո, 1965-ին ստանալով ծնողների օրհնությունը, կրկին մեկնում է Բելգիա՝ այս անգամ Բրյուսելի Ազատ Համալսարանի (ULB) երաժշտագիտական բաժնում

սովորելու: Ինչպես ինքն է նշում, «ցավոք, ոչ մեկ հնարավորություն չի կար որևէ կերպ առնչվելու հայկական կամ այլ արևելյան հարուստ մշակույթի հետ, ավելին, այնտեղ տիրում էր բացարձակ անտեղյակություն և անտարբերություն»: Սակայն Ալահայտոյանը իր պարտքն ու խնդիրը դարձրեց հայ ավանդական ու կոմպոզիտորական արվեստի պրոպագանդան: Նման գործունեության լայն հնարավորություն ստեղծվեց հատկապես 1977 թվականից, երբ նա անցավ աշխատանքի Բոյուսելի պետական ռադիոյում: Մեծ երախտավորը որոշ հաղորդումներ նվիրեց հայ երաժշտությանը, նաև իր ղեկավարությամբ պետական ռադիոյի երգչախմբի հետ, որի կազմում չկար և ոչ մի հայ, կատարել է կոմիտասյան հարսանեկան շարը: Մենք փորձեցինք հետաքրքրվել՝ արդյո՞ք պարոն Ալահայտոյանն ունի այդ կատարման ձայնագրությունը, սակայն, ցավոք, չգտանք: Կարծում ենք, Կոմիտասի թանգարան-ինստիտուտի և ԿԳՄՍՆ-ի պաշտոնական մակարդակով դիմելու դեպքում հնարավոր է Բոյուսելի պետական ռադիոյի արխիվից ստանալ մեզ համար պատմական նշանակության ձայնագրության կրկնօրինակը:

Հենց այս հիմնարկում աշխատելու տարիներին, մասնավորապես 1985 թվականից սկսած, Ցեղասպանության 70-րդ և Կոմիտասի մահվան 50-րդ տարելիցին ընդառաջ, Ալահայտոյանը որոշեց տարերային բնույթ կրող իր բանահավաքչական գործունեությունը դարձնել նպատակային և գործուղվեց հայասփյուռ մի շարք վայրեր.

- Ֆրանսիայի հայկական ծերանոցներ՝ երկուսը Փարիզի շրջանում, մեկը՝ Սեն Ռաֆայել ծովափնյա քաղաքում, փարիզյան հայաշատ արվարձաններ՝ Ալֆորվիլ, Իսի Լե Մուլինո, Շավիյ, Լամար, քաղաքներ՝ Լիոն-Տեսին, Վալանս, Վիեն.

- Բելգիայի հայ գաղութներ՝ Բոյուսել և Անտվերպեն.

- Հոլանդիա՝ Ալմելո:

1986 և 1991 թթ. հրավեր ստանալով ԱՄՆ-ի հայկական համայնքից՝ դասախոսություններով հանդես է գալիս Բոստոնում և Լոս Անջելեսում, որտեղ էլ վերջնական բնակություն հաստատեց 1995 թվականից:

Հենց առաջին այցն այս աշխարհամաս արդյունավետ եղավ նաև հավաքչական առումով.

- Ֆրեզնոյի, Լոս Անջելեսի, Դետրոյտի հատկապես ծերանոցներում:

Պետրոս Ալահայտոյանը 1987-88 թթ. սփյուռքահայության հետ կապերի բաժնի հրավերով եղավ Խորհրդային Հայաստանում և հենց այս ժամանակ ծանոթացավ իր համար բացառիկ մարդկանց ու մասնագետների՝ Մարգարիտ Բրուտյանի, Ալինա Փահլևանյանի, Արուսյակ Սահակյանի և այլոց հետ: Յուրահատուկ ու անգնահատելի էին նրա հանդիպումները Հայրիկ Մուրադյանի հետ, որի անզուգական զգացողությամբ ազնվագույն կատարումները համարում է անգերազանցելի բարձունք:

- 1988 թվականին նպատակային այցեր ունեցավ Հունաստանի մայրաքաղաք Աթենք և Ֆրանսիայի Մարսել քաղաք.

- 1989, 1990 և 1992 թթ.՝ այցելեց Սիրիա՝ Հալեպ, Քեսապ, Գամըշլի:

ԱՄՆ-ում հաստատվելուց և այնտեղի ծերանոցներում վերջին «հունձքն» անելուց առաջ Հալեպում Պ. Ալահայտոյանը հանդիպում է իր կյանքի գլխա-

վոր բանասացին՝ բալուցի Մարիին կամ Մարոյին, որի շնորհիվ մենք այսօր ունենք այդ հարուստ տարածաշրջանի շքեղ երաժշտական մշակույթի համայնապատկերը: Պետրոս Ալահայտոյանը նաև հրապարակախոս է և տարբեր տարիների թղթակցել է Բեյրութի «Ահեկան», «Բագին», «Հայկազեան հանդես», «Ազդակ», Լոս Անջելեսի «Նոր կյանք», «Ասպարեզ» պարբերականներին: Առիթ ենք ունեցել ծանոթանալու դրանց որոշ մասին և պիտի ընդգծենք գրախոսի յուրօրինակ երաժշտագիտական-վերլուծական, միևնույն ժամանակ լայն հանրույթին ուղղված գեղարվեստական, պարզ ու ընկալելի ոճը:

Կառանձնացնենք «Կոմիտասի մասին»<sup>1</sup> և «Փորձ վերակազմելու Բալուի հարսանեկան երգերու շարքը. ըստ Մարո Նալպանտիանի»<sup>2</sup> հոդվածները:

Առաջինում խմբերգային արվեստին մոտ կանգնած հոդվածագիրը ներկայացնում է Կոմիտաս կոմպոզիտորի խմբերգային արվեստը՝ մանրամասն վերլուծելով «Ձավարածեծ» ստեղծագործությունը: Առկա է հոդվածագրի ակնածանքն առ Կոմիտաս. «Մենք, սերտելով կոմիտասյան հրաշագործ, հայակորիզ շունչը, մտերմացանք անոր անմերձենալի և գերմարդկային մեծության հետ», և հավելում. «Տեղ մը ըսված է. ելավ ծիածան Մասիսի արցունքից, մենք ալ կրնանք ըսել. ծնած էր Կոմիտաս մաքրամաքուր աղամանոյա հայ գյուղի հողին ընդերքեն: Հարգանք ու պատկառանք մեր մեծագույն հայուն»<sup>3</sup>:

Երկրորդ հոդվածի պարագայում գործ ունենք ազգագրագետ Ալահայտոյանի հետ, որը բացառիկ փորձ է կատարում վերակազմելու Բալուի տարածաշրջանում ժամանակին կենցաղավարող հարուստ հարսանեկան ծեսը՝ երգային դրվագներով: Ահա վերջինիս մասով էլ աշխատանքը համարվում է այդ ժամանակի համար աննախադեպ ու յուրօրինակ, քանի որ արդեն հրատարակված Ալևորի և Մեսրոպ Կոսյանի՝ Բալուին նվիրված ազգագրական հետազոտություններում տարածաշրջանի երաժշտական տարրն առհասարակ ներկայացված և ուսումնասիրված չէր: Սա, փաստորեն, Ալահայտոյանի հայտնի ժողովածուից էլ տարիներ առաջ գրված առաջին ուսումնասիրությունն է՝ հիմնված բալուցի փառահեղ կրող, բանասաց Մարո Նալպանտիանի կատարումների և ցուցումների վրա:

Մինչև բուն բանահավաքչական նյութը ներկայացնելը խոսենք նաև այդ նյութի հիման վրա արդեն իսկ կազմված ժողովածուների մասին:

Հայ իրականության մեջ բացառիկ «Բալուի (և տարածաշրջանի) երաժշտական ազգագրական հավաքածուն»<sup>4</sup> ըստ վերը հիշատակված Մարո Նալպանտիանի երգածների, և Յեղասպանության 100-ամյակին նվիրված «Վան-Վասպուրականի ազգագրական բնորոշ երգային նմուշներ»<sup>5</sup> ժողովածուն:

Առաջին հերթին պետք է ընդգծենք այն կարևոր հանգամանքը, որ բուն ժողովածուներին կցված է հնչող նյութ՝ կրող-բանասացների կատար-

<sup>1</sup> «Ասպարեզ», 22.04.2017, էջ 19-20:

<sup>2</sup> «Ասպարեզ», 21.04.2001, էջ 43-46:

<sup>3</sup> «Ասպարեզ», 22.04.2017, էջ 20:

<sup>4</sup> **Ալահայտոյան Պ.**, Բալուի (և տարածաշրջանի) երաժշտական ազգագրական հավաքածո, 2009:

<sup>5</sup> **Ալահայտոյան Պ.**, Վան-Վասպուրականի ազգագրական բնորոշ երգային նմուշներ, 2015:

մամբ, որը թույլ է տալիս հետազոտողին կամ երաժշտասեր ունկնդրին լսել և ընկալել նախ կատարման կերպն ու երգի բնույթը, ինչպես նաև այն, ինչ նույնիսկ հավելյալ նշանների կիրառությամբ երբեմն հնարավոր չէ ամրագրել: Մեջբերենք Բալուի ժողովածուից հեղինակի խոսքերը. «...որքան որ ալ «գեղարուեստական» արժևորում ընծայուի այս երգերուն, անոնք նախ և առաջ վաերագրական «փաստահնչիւններ» են՝ անպաշտօն, բներգային»<sup>6</sup>:

Բացառիկության մեկ այլ հանգամանքն այն է, որ դրանք լրացնում են ազգագրական որոշակի գոտի ներկայացնող ժողովածուների շարքը, որն էլ հետազոտողներին կտա հնարավորություն, օրինակ, առանց նյութի համակարգման ու դրա վրա ժամանակի կորստի՝ դուրս բերելու տվյալ ազգագրական գոտու երաժշտական բարբառը:

Ժողովածուները կազմված, ծանոթագրված ու երաժշտական նյութի առումով վերծանված են ամենայն բժախնդրությամբ և գիտական բարեխղճությամբ, սակայն շատ դեպքերում հեղինակն անարդարացիորեն ինքնաքննադատ է և, օրինակ, ընդգծում է այն հանգամանքը, որ ինքը չունի Արուսյակ Սահակյանի կամ Ալինա Փահլևանյանի մասնագիտական պատրաստվածությունը: Սա, իհարկե, միայն հետևանք է Պետրոս Ալահայտոյան համեստագույն անհատ լինելու:

### Եզրակացություններ

Պետրոս Ալահայտոյանի հավաքած նյութն իբրև ժողովածուներ դեռ կդրվեն հետազոտողների և երաժշտասերների սեղանին, քանի որ 2019 թվականի ձմռանը ԱՄՆ-ում կայացած մեր առաջին իսկ հանդիպումից ամիսներ անց բանահավաքն ու իր տիկինը՝ ամուսնուն, նրա գործին և հայ մշակույթին նվիրված փառահեղ անձնավորություն տիկին Վիոլետը, չափազանց հուզիչ և կարևոր որոշում կայացրին՝ հավաքված ողջ նյութն ուղարկել հայրենիք: Ես էլ իմ հերթին խոստացա, որ այդ բացառիկ նյութը կթվայնացվի, կհամակարգվի և անպայման կդառնա ժողովածուներ: Մի շարք կառույցների և մարդկանց շնորհիվ այդ հսկայածավալ գործընթացի մեկնարկն արդեն տրված է:

125 տուփ մագնիտոֆոնային ժապավեն (կլոր) և 430 տուփ մագնիտոֆոնային ձայնագրություն (քառակուսի) պարունակող այս բացառիկ հավաքածուն բանահավաքի որոշմամբ և նախածեռնությամբ հայրենիք ուղարկվեց, որից հետո առաջնահերթ խնդիր դարձան նյութի թվայնացումն ու նախնական անձնագրավորումը: Գործընթացի մեկնարկը հնարավոր եղավ ARISC-ի (American Research Institute of the South Caucasus) հատուկ դրամաշնորհի<sup>7</sup> շնորհիվ, որից հետո ծրագրի իրականացմանն ու նման ծավալով նյութի թվայնացմանը աջակցեցին ԿԳՄՄՆ-ն և Հայաստանի հանրային ռադիոն՝ ի դեմս փոխնախարար Արայիկ Խզմայանի և ռադիոյի տնօրեն Գարեգին Խումարյանի:

<sup>6</sup> Ալահայտոյան Պ., Բալուի (և տարածաշրջանի) երաժշտական ազգագրական հավաքածոյ, էջ 5:

<sup>7</sup> Collaborative Heritage Management Grant.

**ХРАНИТЕЛЬ НАЦИОНАЛЬНОЙ КУЛЬТУРЫ: ПЕТРОС АЛААЙТОЯН**

АНИ АКОПЯН

В статье представлена жизнь и деятельность одной из ключевых фигур армянской национальной музыки – фольклориста, музыколога, дирижера и общественного деятеля Петроса Алаайтояна. Будучи учеником Барсега Каначяна и пройдя в Европесе специализацию по музыкологии, П. Алаайтоян стал работать на Брюссельском государственном радио. В 1985 г. П. Алаайтоян покинул Брюссель и предпринял поездку по армянским общинам Европы, стран Востока и США, посетил также дома престарелых в этих общинах.

В этих поездках им были сделаны аудиозаписи, а также собраны важные этнографические и фактографические материалы. Собранные материалы им были переданы Институту искусств НАН РА.

На сегодняшний день 430 магнитофонных кассет, а также 125 бабин хранятся в фонотеке имени Арама Кочаряна в Институте искусств НАН РА. Эти ценные материалы подлежат доскональному изучению и будут опубликованы в отдельных научных сборниках.

**Ключевые слова** – Петрос Алаайтоян, музыка, традиционная, собиратель, запись, сказитель, сборник.

**THE GUARDIAN OF NATIONAL CULTURE: BEDROS ALAHAYDOYAN**

АНИ НАКОВЯН

The article describes the life and career of one of the key figures of Armenian national music, the folklorist, musicologist, conductor and social activist Bedros Alahaidoyan. A pupil of Barsegh Kanachyan, upon specialization in musicology in Brussels, he started working for the Brussels State Radio. In 1985, B. Alahaidoyan left Brussels to visit the Armenian communities in Europe, Syria and the USA, the retirement homes in those communities. He used these trips to make audio recordings, collect valuable ethnographic and other fact-based materials – 430 tape recorder cassettes and 125 reel-to-reel tapes in total, which he submitted to NAS RA Institute of Arts.

**Key words** – Bedros Alahaidoyan, music, traditional, collector, recording, narrator, collection.